Անունների ձուլում

Տրված է երկու անուն: Հարկավոր է գտնել մինիմալ երկարության այնպիսի տող, որի համար երկու անուններն էլ հանդիսանան ենթատող, այսինքն տողը սկսվում է անուններից մեկով և ավարտվում է մյուսով:

Մուտքը

Մուտքում տրված է երկու տող, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է մի անուն: Անունները բաղկացած են անգլերեն տառերից, որոնցից միայն առաջինն է մեծատառ: Անունների երկարությունները չեն գերազանցում 30-ը:

Ելքը

Ելքում հարկավոր է արտածել ամենակարճ տողը, որում միաժամանակ հանդիպում են մուտքում տրված անունները: Այդ տողում անունները պետք է սկսվեն մեծատառով: Եթե գոյություն ունի մի քանի լուծում, հարկավոր է արտածել այն, որը բառարանային կարգով ավելի փոքր է:

Օրինակ

Մուտքը.
Arman

Mane

Ելքը.
ArMane